# ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 1

| Թեմա/գործունեություն | | Նպատակը | Ակնկալվող վերջնարդյունքներ |
|---|---|---|---|
| Առաջին կիսամյակ | | | |
| 1. | Ինչո՞վ ենք մենք նկարում<br>Աշակերտական սեղանին դրված իրերի պատկերում | Դիտում և ուսումնասիրում,<br>ծանոթացում նյութին և գործիքներին | Փործարկել նյութերը և գործիքները: |
| 2. | Իմ սիրելի խաղալիքը | Զարգացնել համեմատելու կարողությունը, սովորեցնել պատկերի ճիշտ տեղադրումը թղթի վրա | Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,<br>Աշխատանքի համար ճիշտ ընտրել թղթի դիրքը: |
| 3. | Հիմնական գույներ /վարժանք/<br>Մրգերի և բանջարեղենի պատկերում | Նյութերը մտածված և խնայողաբար օգտագործելու հմտությունների ձևավորում | Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը, անվանել գույները: |
| 4. | Գծային հորինվածք հիմնական գույներով Վարժություններ տարբեր որակների և գույների թղթերի վրա | Տարբեր չափի, որակի և գույնի թղթերի վրա գույնը պատկերելու հմտությունների ձևավորում | Արտահայտել մտքերն ու գաղափարները գունային երանգներով: |
| 5. | Տնակ կենդանիների համար | Պատկերի ընդհանրացման  և նմանության կարողությունների ձևավորում: | Կիրառել դիտման, ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքները: |
| 6. | Բնության ձայներ:<br>Աշխատանք ծեփամածիկով:<br>Բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: | Բնօրինակից կամ հիշողությամբ պատկերման կորղությունների ձևավորում:<br>Միջառարկայական կապերի պահպանում: | Նկարչական միջոցների փործարկում՝ մատիտներ, յուղամատիտներ, թաղքեգրիչներ, վրձիններ, ներկեր, ծեփամածիկ<br>Մեկնաբանել, վերլուծել, ներկայացնել կարծիք: |
| 7. | Խաղում եմ ընկերներիս հետ<br>Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում: | Ստեղծագործական հորինվածքների կատարման հմտությունների ձևավորում:<br>Ստեղծագործական ներուժի ակտիվացում աշխատանքի պլանավորման, արդյունքների ստացման հմտությունների ձևավորում : | Ստեղծել հորինվածքներ, որտեղ կարտացոլվեն սովորական մարդուն և հեքիաթների հերոսներին բնորոշ գծեր: Ազատ արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով  2D և 3D աշխատանքներ: |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Այգի<br>Տերևներ, «Հագուստ աշնան համար» | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում: | Միտքը պատկերել հետաքրքիր և ներկայացնել իր կատարած աշխատանքները: Ստեղծել հորինվածքներ: (նկարչական նյութը` ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա): |
| 9. | Ես աշակերտ եմ<br>Հորինվածքը կատարում միայն գծի կամ միայն գույնի միջոցով: | Ինքնուրույն աշխատելու, հորինվածքները համարձակ պատկերելու կարողությունների ձևավորում: | Պահպանել աշխատանքներում համաչափությունը:<br>Պատկերները ճիշտ տեղադրել թղթի հարթության մեջ: |
| 10. | Օրվա ռեժիմ | Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծման կարողությունների ձևավորում: | Պահպանել համաչափությունը:<br>Կիրառել հիմնական և բաղադրյալ գույները և ստանալ նոր գույներ: |
| 11. | Թեմատիկ աշխատանք.<br>«Ճանապարհորդություն օդապարիկով»:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստում բնանկարի ուսումնասիրություն: | Արվեստագետների գործունեության առանձնահատկությունների և դրանց կարևորության վերհանում: | Ունենալ գեղեցիկը տեսնելու, պահպանելու ցանկություն: Դասակարգել ստեղծագործություն-ներում հադիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր):<br>Ճեպանկարել` բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: |
| 12. | Մուլտֆիլմերի սիրելի հերոսներ:<br>Կոլաժ<br>Պատկերել սիրած հերոսներին: | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներում տրամադրության, զգացմունքի կամ անձնապես կրած հուզական վերաբերմունքի արտահայտման կարողությունների ձևավորում: | Կատարել համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ: Պահպանել հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականությանը: |
| 13. | Երեկ, այսօր, վաղը | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում: | Կիրառել համապատասխան գուներանգներ:<br>Աշխատանքը ճիշտ տեղադրել թղթի հարթության մեջ:<br>Տարբեր չափերի թղթերի վրա կառուցել հորինվածքներ:<br>Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ: |

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Այբուբեն<br>«Ես և իմ անվան առաջին տառը» | Կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված պատկերի ստեղծման հմտությունների ձևավորում: | Ստեղծել պարզ նախշեր:<br>Ստեղծագործել այբուբենի տառերով:<br>Ներկայացնել կարծիք: |
| 15. | Թարգմանչաց տոն /Մ. Մաշտոց-դասվել է սրբերի շարքին-Աստվածաշնչի թարգմանություն/կապել այբուբենի հետ<br>Բացիկներ | Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծման կարողությունների ձևավորում: | Արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ՝ եզրագծերով, տոներով և գունային երանգներով:<br>Կիրառել հիմնական և բաղադրյալ գույները և ստանա նոր գույներ: Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: |
| 16. | Հեքիաթի ձևավորում<br>«Ծիտը» | Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքային փուլերի պլանավորման, արդյունքների ստացման կարողության ձևավորում: | Աշխատանքը ամբողջացնել ստեղծագործական հնարներով:<br>Ներկայացնել ստեղծագործական աշխատանքները: Միտքն արտահայտել անկաշկանդ ու հետաքրքիր: |
| 17. | Տիկնիկային ներկայացման ձևավորում: | Տարբեր ազգերի մշակույթի, ազգային կոլորիտի առանձնահատկության մասին պատկերացման ձևավորում:<br>Գեղագիտության և ստեղծարարության արժևորում: | Փորձարկել տարբեր նյութեր՝ հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով:<br>Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև թափոններից: Ճանաչել տարբեր ազգերի տիկնիկներին, իմանա անունները: |
| 18. | Նորարական նկարչություն:<br>Առանց վրձնի/կատարման տեխնիկա/-պուանտելիզմի ոճով | Ստեղծագործական աշխատանքներում նյութերը, մեթոդները և միջոցները փորձարկելու, ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: | Արտահայտել վերաբերմունք:<br>Բացատրել, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար:<br>Անվանել նյութերն ու գործիքները:<br>Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով՝ կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն: |

| | | | |
|---|---|---|---|
| 19. | Դիմակահանդես -<br>ընտրել սիրած կերպարը և ստեղծել սեփական հերոսին | Տարբեր նյութերի կիրառմամբ ստեղծագործական առաջադրանքների կատարման հմտությունների ձևավորում:<br>Պատկերվող կերպարների, երևույթների, իրադարձությունների նկատմամբ զգացմունքային և գեղագիտական վերաբերմունքի ձևավորում: | Անվանել նյութերն ու գործիքները:<br>Համեմատել նյութերը:<br>Օգտագործել մասնագիտական բառապաշար:<br>Բանավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները: |
| 20. | Արհեստներ<br>Հեքիաթ՝ «Հայկական գորգ» | Ազգային նկարագրի, խորհրդանիշների և արտահայտչամիջոցների գեղարվեստա-կան մատուցման կարողությունների ձևավորում: Բարոյական արժեքային համակարգի ձևավորում: | Մեկնաբանել, թե ինչպե՞ս են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը:<br>Աշխատանքներում ներկայացնել ազգային մոտիվները: |
| 21. | Չափումներ<br>Նախշերի կատարում, մանրանկարչության զարդանախշերի կիրառմամբ: | Տարբեր նյութերի կիրառմամբ ստեղծագործական առաջադրանքների կատարման հմտությունների ձևավորում: | Ներկայացնել, թե ինչո՞վ է արվեստի ստեղծագործությունը նման կամ տարբեր իրականությունից:<br>Ներկայացնել զարդանախշը՝ որպես ազգային առանձնահատկություն: |
| 22. | Զրույց<br>Դիտում | Ծանոթացում հայ և արտասահմանյան նկարիչների աշխատանքներին: | Իմանալ որոշ տեղեկություններ նկարչի կյանքից, ճանաչել մի քանի հայտնի նկար: |
| 23. | Բնության երևույթներ<br>Թեմատիկ աշխատանք «Առաջին ձյուն» | Տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբեր-մունք արտահայտող աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում: | Գծերի, ձևերի, պատկերների միջոցով ստեղծել ճանաչելի պատկերներ և հորինվածքներ:<br>Կատարել բնապատկեր գծի միջոցով: |
| 24. | Ծննդյան տարեդարձ՝<br>շնորհավորական բացիկ | Աշխատանքային իմպրովիզացիայի դեկորատիվ վերարտադրելու կարողությունների ձևավորում:<br>Ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողությունների ձևավորում: | Միտքը պատկերել հետաքրքիր և ներկայացնել կատարած աշխատանքները:<br>Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար: |
| 25 | «Ձմեռային արկածներ» | Հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականության ապահովման կարողությունների ձևավորում: | Տարբերել ուրվապատկերները:<br>Ստվարաթղթի վրա սոսնձել այլ որակի թղթեր և տարբեր նյութեր:<br>Ստեղծել հետաքրքիր հորինվածքներ: |

| | | | |
|---|---|---|---|
| 26. | «Ձնեմարդ»<br>Ծեփակերտում | Աշխատանքային իմպրովիզացիայի դեկորատիվ վերարտադրելու կարողությունների ձևավորում:<br>Ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողությունների ձևավորում: | Ստեղծել հորինվածքներ, որտեղ կարտացոլվեն սովորական մարդուն և հեքիաթների հերոսներին, տիկնիկային թատրոնի տիկնիկների կերպարներին բնորոշ գծեր: |
| 27. | Հարթապատկերային ծեփակերտում<br>«Եղնիի» | Տարբեր նյութերի կիրառմամբ ստեղծագործական առաջադրանքների կատարման հմտությունների ձևավորում: | Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ, երկրաչափական պատկերների կառուցմամբ ստանալ հարթապատկերային եղնի:Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործի մասնագիտական բառապաշար: |
| 28. | Ճեպանկար | Ստեղծագործական աշխատանքը մեկնաբանելու, քննարկելու, գնահատելու հմտությունների ձևավորում: | Կատարել տիկնիկների/ խաղալիքների ճեպանկարներ ներկայացման համար: |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| **Երկրորդ կիսամյակ** | | | |
| 1. | Հեքիաթի ձևավորում | Ստեղծագործական երևակայության զարգացում: | Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ:<br>Վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննադատական մոտեցում տեսածի և զգացածի նկատմամբ: |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Հայկական գորգ | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Հայկական մշակույթի դերի արժևորում: | Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը:<br>Ներկայացնել հայկական գորգը, որպես հայկական մշակութային արժեք: |
| 3. | Խճանկար | Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: | Իմանալ խճանկարի մասին, որպես հայկական մշակութային կարևոր արժեք: |
| 4. | «Շունն ու կատուն»<br>Հեքիաթի ձևավորում | Դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով ստեղծագործական կարողությունների ձևավորում: | Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:<br>Արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ, եզրագծերով, տոներով և գունային երանգներով |
| 5. | Նուրի<br>Ազգային տիկնիկի ձևավորում | Դիմագծերի ընդհանրացման և նմանու-թյան կարողությունների ձևավորում: | Ստանալ ծավալային պատկերներ:<br>Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: |
| 6. | Առարկաների պատկերում բնօրինակից կամ երևակայությամբ | Իրատեսական, վերացական և երևակայական աշխատանքներ ստեղծելու կարողությունների ձևավորում: | Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: |
| 7. | Ազգային տոն | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Հայկական մշակույթի դերի արժևորում: | Մեկնաբանել «բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով» արտահայտությունը:<br>Մեկնաբանել մշակութային հաստատու-թյուններում աշխատողների դերը և նշանակությունը: |
| 8. | Արհեստներ<br>Ժող. վարպետի արհեստանոցում | Արվեստի ստեղծագործությունները ուսումնասիրելու, ներկայացնելու և վերլուծելու կարողությունների ձևավորում: | Մեկնաբանել, ստեղծագործություններից ստացած տպավորությունները:<br>Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: |
| 9. | Իմ բնակավայրը | Ստեղծագործական երևակայության և բնօրինակից պատկերման համադրությունների կատարման հմտությունների ձևավորում: | Մեկնաբանել սեփական աշխատանքները:<br>Անվանել նյութերն ու գործիքները: |
| 10. | Մեր լեռներն ու լճերը | Ուրվապատկերների, նշանների, նախշերի և խորհրդանիշերի պատկերմ կամ պատրաստման կարողությունների ձևավորում: | Մեկնաբանել, ստեղծագործություններից ստացած տպավորությունները:<br>Գաղափարներն արտահայտելիս կիրառել խորհրդանշաններ: |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | Իմ ընտանիքը | Արժեքային համակարգի ձևավորում: | Ներկայացնել որևէ իրադարձություն՝ ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին մասնակցել են ընտանիքի անդամները: |
| 12. | Մայրիկիս<br>Շնորհավորական բացիկ | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Դիմագծերի ընդհանրացման և նմանու-թյան կարողությունների ձևավորում: | Պատկերել նախշեր, Պատրաստել և ձևավորել շնորհավորական բացիկների: |
| 13. | Սևուկ ուլիկը<br>Հեքիաթի ձևավորում | Ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերի ստեղծման հմտությունների ձևավորում: | Առանց նախօրոք մատիտով արված նկարի, ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ:<br>Ազատորեն ստեղծագործել տարբեր նյութերով: |
| 14. | Գիշեր-ցերեկ | Համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում: | Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: |
| 15. | Մանրանկարչություն<br>Պարզ նախշեր | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Հայկական մշակույթի դերի արժևորում: | Նկարագրել արվեստի ստեղծագործությունները:<br>Աշխատանքներում ներկայացնել ազգային մոտիվները: |
| 16. | Ափսեի ձևավորում<br>Մրգեր և հատապտուղներ | Ստեղծագործական աշխատանքներում նյութերը, մեթոդները և միջոցները փորձարկելու, ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: | Արտահայտել ինքնուրույն վերաբերմունք<br>Բացատրել, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար:<br>Ներկայացնել, թե ինչո՞վ է իր աշխատանքը նման կամ տարբեր իրականությունից: |
| 17. | Օգնենք տանը կամ դպրոցին<br>Նկարչական միջոցների փորձարկում՝ մատիտներ, յուղամատիտներ, մարկերներ, վրձիններ, ներկեր: | Դիտման, ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքների կիրառման կարողությունների ձևավորում: | Ազատորեն աշխատել տարբեր նյութերով:<br>Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: |
| 18. | Ս. Զատկի տոն | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Ստեղծագործական աշխատանքներում նյութերի ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: | Տարբեր նյութերով և միջոցներով ձևավորել տոնական բացիկներ:<br>Պատկերել Զատկի հավկիթներ:<br>Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: |

| | | | |
|---|---|---|---|
| 19. | Ծաղիկներով նատյուրմորտ | Դիտման, ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքների կիրառման կարողությունների ձևավորում: | Ստանալ ծավալային պատկերներ:<br>Բացատրել, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար: |
| 20. | «Ավետման տոն», «Ապրիլի 7»<br>Նախշերի կատարում, շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում: | Արժեքային համակարգի ձևավորում:<br>Ստեղծագործական աշխատանքներում նյութերի ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: | Պատկերել նախշեր, Պատրաստել և ձևավորել շնորհավորական բացիկների: |
| 21. | Գարունը իմ բնակավայրում | Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում պատկերների բացահայտման կարողությունների ձևավորում: | Պատկերել հիշողությամբ:<br>Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: |
| 22. | Հեքիաթի ձևավորում<br>«Երեք խոզուկների հեքիաթը» | Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքային փուլերի պլանավորման, արդյունքների ստացման կարողությունների ձևավորում: | Արտահայտել վերաբերմունք:<br>Բացատրել, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար: |
| 23. | Տարվա չորս եղանակները<br>Բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: | Բնօրինակից կամ հիշողությամբ պատկերման կորողությունների ձևավորում:<br>Միջառարկայական կապերի պահպանում: | Փորձարկել նկարչական միջոցները ՝ մատիտներ, յուղամատիտներ, թաղքեգրիչներ, վրձիններ, ներկեր:<br>Մեկնաբանել, վերլուծել, ներկայացնել կարծիք: |
| 24. | Փողոցում | Հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականության ապահովման կարողությունների ձևավորում | Միտքը պատկերել հետաքրքիր:<br>Ներկայացնել  կատարած աշխատանքները: |
| 25. | Խճանկար | Ուսումնասիրելու և հետազելու կարողությունների ձևավորում: | Կատարել խճանկարի էսքիզ:<br>Կազմակերպել քննարկումներ<br>-Որտե՞ղ են ստեղծագործում:<br>-Ի՞նչ գործիքներ են կիրառում:<br>-Ի՞նչ ստեղծագործություններ են ստեղծում: |
| 26. | Հեքիաթի ձևավորում «Պոչատ աղվեսը»: | Հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականության ապահովման կարողությունների ձևավորում: | Միտքը պատկերել հետաքրքիր և ներկայացնել կատարած աշխատանքները:<br>Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար: |

| | | | |
|---|---|---|---|
| 27. | Ծաղկած ծառեր | Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքային փուլերի պլանավորման, արդյունքների ստացման կարողությունների ձևավորում: | Արտահայտել վերաբերմունք կատարած աշխատանքի վերաբերյալ:<br>Բացատրել, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար: |
| 28. | Տիկնիկային ներկայացման ձևավորում | Դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորում: | Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ:<br>Ներկայացնել ստեղծած կերպարը: |
| 29. | Այբուբեն<br>Գ. Խանջյան, «Հայոց այբուբեն»: | Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: | Ճանաչել, տարբերել և գնահատել հայկական արվեստը ներկայացնող աշխատանքները:<br>Արտահայտել վերաբերմունք: |
| 30. | Իմ դպրոցը | Դպրոցի դերի արժևորում:<br>Կարծիք և վերաբերմունք արտահայտելու հմտությունների ձևավորում: | Միայն գծի միջոցով պատկերի ստեղծում:<br>Կատարել քաղաքային կամ գյուղական բնանկար: |
| 31. | Կավճանկար | Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքային փուլերի պլանավորման, արդյունքների ստացման կարողությունների ձևավորում: | Կատարել պարզ պատկերներ, ձևեր և առարկաներ:<br>Տարածության մեջ ճիշտ տեղադրել պատկերը: |
| 32. | Ամոփում<br>Ավարտական ցուցադրություն | Անցած թեմաների կրկնություն: | Մեկնաբանել, ստեղծագործություններից ստացած տպավորությունները:<br>Բացատրել. թե ինչո՞ւ են ընտրվել տվյալ աշխա-տանքները: |